Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

*Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.*

# ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ

## 5-րդ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍԻ

### ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

355.23
Z-24

Յերևան 1926

355.23
2-24
ա6
1 MAR 2010
1003
13084

# ՀԱՅԿԱԿԱՆ

## ՀՐԱՁԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ

## 5-ՐԴ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍԻ

## ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

(ՀՈՒՆՎԱՐ 1926 Թ.)

Երեվան 1926

13 SEP 2013

Շարված է Լինոտիպով

Հայկական Դիվիզիայի 5-րդ կուսկոնֆերանսը նշել է մեր կուսակցական աշխատանքի հետագա ուղիները:

Կոնֆերանսի բանաձևերի հրատարակությունը նպատակ ունի մի կողմից ծանոթացնել կուսակցական ու կոմյերիտական մասսային կոնֆերանսի վորոշումներին, իսկ մյուս կողմից՝ ուղղեցույց հանդիսանալ այդ ասպարեզում աշխատող ընկերների առօրյա գործունեյությանը:

ՔԱՂԲԱԺԻՆ

Տպագրական Տրեստի Առաջին Տպարան
Գրատեխ. 404 բ. Պատ. 2745 Տիրաժ 800

# Բ Ա Ն Ա Ձ Ե Վ

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանի՝ «Լենինիզմը և մեր քաղաքականության հերթական խնդիրները» զեկուցման առթիվ:

---

Հայկական Հրաձիգ Դիվիզիայի կուսկազմակերպության 5-րդ կոնֆերանսը վողջունում է և միանում Համամիութենական Կոմկուսի 14-րդ համագումարի վորոշումներին:

Կոնֆերանսը կատարելապես համոզված է, վոր Համամիութենական Կոմկուսի Կենտկոմը տարել է և կը տանի լենինյան ուղիղ գիծ և վո՛չ վոքի թույլ չի տա ճեղքվածք առաջ բերել համաշխարհային պրոլետարական հեղափոխության միջնաբերդ՝ Համամիութենական Կոմկուսի շարքերում:

Կոնֆերանսը լիահույս է, վոր ոպպոզիցիան կը հասկանա իր սխալը և թույլ չի տա իրեն խախտելու լենինյան կուսակցության յերկաթյա դիսցիպլինան ու միասնականությունը:

Կոնֆերանսը անհրաժեշտ է համարում ուսումնասիրել Համամիութենական Կոմկուսակցության 14-րդ համագումարի վորոշումները, դարձնելով այն լայն մասսաների սեփականություն:

---

## ԲԱՆԱՁԵՎ

Կովկասյան Կարմրադրոշ Բանակի Քաղաքական Վարչության զեկուցման առթիվ:

---

Լսելով ընկ. Հ. Հովսեփյանի զեկուցումը՝ Կովկասյան Կարմրադրոշ բանակի Քաղաքական Վարչության աշխատանքների մասին, Հ. Հ. Դ. Կուսկազմակերպության 5-րդ կոնֆերանսը, Քաղվարչության տարած աշխատանքը համարում է բավարար և քաղաքական-կուսակցական գիծը՝ ճիշտ:

Մեր յերկրի ընդհանուր տնտեսական վերելքի ու քաղաքական ամրապնդման հետևանքով առաջացած՝ մասսաների քաղաքական-հասարակական ակտիվությունը բանակի շարքերում իր արտահայտությունը գտել է 1903 թ. ծնված նոր զինակոչիկների քաղաքական ակտիվության մեջ: Այս վերջին հանգամանքը, բանակի կուսկազմակերպության առաջ մի հիմնական խնդիր է դնում—Քաղվարչության ղեկավարությամբ քաղաքական ու կուսակցական աշխատանքները կառուցել այնպես, որպեսզի ընդգրկվեն նորազինակոչայինները, դրանով իսկ ապահովված կը լինի նրանց մարտական-քաղաքական դաստիարակության տալու գործը:

Այս խնդրի հիմնական նախադրյալը—բանակի կուսկազմակերպության ներկուսակցական դաստիարակչական աշխատանքների խորացումն է, մի խըն-



դիր, որ առաջադրվել է մեր կուսակցության 14-րդ համագումարի կողմից:

Անցյալ տարի, բանակի կուսկազմակերպությունը իր առաջ ունենալով մի շարք կարևոր հիմնական խնդիրներ, մեծ աշխատանք կատարեց նաև Բանակի դիսցիպլինան բարձրացնելու ասպարեզում:

Կոնֆերանսը ակներև է համարում մեր նվաճումները բանակի դիսցիպլինայի ուժեղացման գործում, սակայն գտնում է, որ մոտակա ժամանակի ընթացքում դիսցիպլինայի ուժեղացման խնդիրը բանակի կազմակերպության համար մնում է հերթական անելիքներից մեկը:

Յերկրային բանակի շինարարությունը, նախակոչային պատրաստության ու ռազմականացման գործը ունեցել է մեծ նվաճումներ ու դարձել է մեր ռազմական շինարարության էական ու անբաժանելի մասը: Այդ շինարարության հետագա հաջողություններն ապահովված է այսօր:

Անհրաժեշտ է, որ հետագայում, Քաղվարչությունն էլ ավելի ուժեղացնի իր ուշադրությունն յերկրային շինարարության, նախակոչային պատրաստության ու ռազմականացման գործի վրա, հատկապես հոգ տանի լրացնելու համար այդ աշխատանքների ասպարեզում զգացվող նյութական միջոցների պակասությունը:

Կոնֆերանսը գտնում է, որ Կովկասյան Բանակի ազգային զորամասերն արդեն ավարտել են իրենց կազմակերպչական շրջանը: Այդ ասպարեզում հերթական խնդիրն է՝ ամրացնել ձեռք բերած նվաճումներն ու հետագայում խորացնել ազգային-ռազմական շի-

նալարությունը, վորով և պետք պայմանավորված լինի Բաղվարչության քաղաքական ու կուսակցական ղեկավարությունը, ազգային զորամասերի նկատմամբ:

Արձանագրելով Քաղաքական Վարչության ձեռք բերած նվաճումներն ու հաջողությունները, ազգային զորամասերի շինարարության, նրանց քաղաքական ու կուսակցական շինարարության գործում, կոնֆերանսը անհրաժեշտ է գտնում, վոր էլ ավելի ուժեղացվի կենդանի կապն ու ղեկավարությունը:

Ազգային զորամասերի կուսակցական ու քաղաքական գործում ձեռք բերված հաջողությունները, Բաղվարչության առաջ խնդիր են դնում—մի կողմից ավելի մեծ ուշադրություն դարձնել ազգային զորամասերի փորձի հաշվեառման վրա, մյուս կողմից, համարային զորամասերում կուտակված փորձը փոխադրել ազգային զորամասերը:

Կոնֆերանսը գտնում է, վոր Բաղվարչությունը պարապմունքների և կուլտլուսավորության ծրագրերի մշակման ասպարեզում, ազգային առանձնահատկությունները հաշվի առնելու տեսակետից խնդիրը լուծել է բավարար չափով, սակայն անհրաժեշտ է ազգային զորամասերին տրամադրել նյութական միջոցներ՝ ազգային լեզվով անհրաժեշտ ձեռնարկներ հրատարակելու համար:

---

## ԲԱՆԱՁԵՎ

Հայկական Հրաձիգ Դիվիզիայի Բաղ-բաժնի զեկուցման առթիվ:

---

Լսելով ընկ. Գ. Սաֆրազբեկյանի զեկուցումը «Հ. Հ. Դիվիզիայի Բաղբաժնի գործունեության մասին», Հայկական Դիվիզիայի կուսակցական 5-րդ կոնֆերանսը գտնում է կատարած աշխատանքը բավարար և վարած գիծը՝ ճիշտ:

1. Կոնֆերանսը շեշտելով անտեսական ասպարեզում Դիվիզիայի կատարած նվաճումները, անհրաժեշտ է համարում ապագայում ավելի ևս ուշադրություն դարձնել այդ խնդրի վրա, մասնավորապես՝ կարմիր բանակայինների զորանոցային կենցաղը բարելավելու և հրամքաղկազմի բնակարանային կրիզիսը մեղմացնելու ու ապա ամբողջապես վերացնելու ուղղությամբ:

2. Երկրի ընդհանուր անտեսական աճման և նրա հետ կապված մասսաների ակտիվության զուգընթաց, մեր Դիվիզիայի շարքերն են գալիս ավելի զարգացած, գրագետ և ակտիվ յերիտասարդներ, վորոնց թվում է քաղաքի ու գյուղի ինտելիգենցիայի մի մասը: Այս հանգամանքը բարդացնում է մեր քաղաքական աշխատանքը և Դիվիզիայի հրամքաղաշխատողների և կուսկազմակերպության առաջ

գնում է այդ մասսաների ընդգրկման ու վերամշակման խնդիրը: Այդ պատճառով իսկ, կոնֆերանսը անհրաժեշտ է համարում, որ Քաղբաժինն առանձին ուշադրություն դարձնի հրամանատարական և քաղաքական կազմի վերապատրաստման կազմի վրա:

3. Այդ ասպարիզում անհրաժեշտ է, որպեսզի Քաղբաժինը սերտ կապ պահպանի ռազմական դպրոցների հետ ու համապատասխան ցուցմունքներ տա նրանց:

Արդեն ժամանակն է, որպեսզի դպրոցների համալրման ծանրության կենտրոնը քաղաքացիական կազմակերպություններից անցնի Դիվիզիային. անհրաժեշտ է, որ Քաղբաժինը նախորոք զբաղվի կուրսանտների ընտրության գործով, հատուկ ուշադրություն դարձնելով բանվորական և կուսակցական միջուկի պահպանման խնդրի վրա: Այդ միջոցով հնարավոր կը լիներ լուծել նաև այն հրամկազմի վերապատրաստման հարցը, որը բավականաչափ տեսական պատրաստություն չունի:

4. Ռազմական դպրոցներից մեր բանակն անցնող հրամանատարներն ու քաղաշխատողները պետք է կատարելապես տիրապետած լինեն ռազմական—քաղաքական ու հանրագիտական առարկաներին: Հանրագիտական պատրաստության թերագնահատումը միանգամայն անթույլատրելի է: Այդ պատճառով, անհրաժեշտ է, որպեսզի դպրոցների ապագա համալրման ժամանակ հանրակրթական և քաղաքական գիտելիքների պահանջըն ավելացվի:

Կուրսանտների քաղաքական հրահանգչական պատրաստության վրա անհրաժեշտ է առանձին ուշադրություն դարձնել: Պետք է դպրոցները ապահովվեն փորձառություն ու հմտություն ունեցող դասախոսներով:

Կոնֆերանսը արձանագրում է, որ կուրսանտները զորամասերի անմիջական աշխատանքներին մասնակցում են անբավարար չափով, մի երևույթ, որ այսուհետ հանդուրժել չի կարելի:

5. Ռազմա—քաղաքական դպրոցի կուրսանտների նախնական թույլ պատրաստությունը և ռուսաց լեզվին չտիրապետելը (առանց որի մեր թե՛ քաղաքական և թե՛ հրամանատարական կազմը իր հեռանկարներով կապված կմնա Հայկական Դիվիզիայի հետ) անհնար է դարձնում ռեալիզացիայի ենթարկել ուսումնական երեք տարվա ծրագիրը: Այդ պատճառով ռազմ—քաղդպրոցի համար, կենսական անհրաժեշտություն է դառնում չորս ամյա դասընթացների անցնելը, որի հետևանքով կբարձրանա ապագա հրամանատարի ու քաղաշխատավորի որակը, ի միջի այլոց կը թեթևանա և կուրսանտի ծանրաբեռնվածությունը:

6. Քաղբաժնի՝ որպես կուսակցական կոմիտեյի, ղեկավարությունը ռազմական և ռազմաքաղաքական դպրոցների կուսակցական—քաղաքական և ազգային առանձնահատկությունների ընդգծմամբ, գտնել ճիշտ է և անհրաժեշտ:

Գտնելով, որ Քաղվարչությունը տվել է ընդհանուր առմամբ պարզ հրահանգ՝ Քաղբաժինների և ռազմական դպրոցների փոխհարաբերությունների վերաբերյալ, կուսկոնֆերանսը անհրաժեշտ է համարում մշակել լրացուցիչ գործնական ցուցմունքներ, որ-

ղեկավարի վերացվեն աշխատանքի ընթացքում յերևան առաջացող թյուրիմացությունները: Անհրաժեշտ է, վորպեսզի հետագայում Քաղբաժինն ե՛լ ավելի մոտ կանգնի ռազմական դպրոցներին, նրանց ուսումնասիրելու տեսակետից, վորով ավելի կը հեշտանա ղեկավարության գործը:

7. Ռազմական կարգապահության ամրացման ասպարեզում, կոնֆերանսը գտնում է, վոր վերջին մեկ ու կես տարվա ընթացքում մեծ նվաճումներ են կատարվել: Սակայն անհրաժեշտ է չեշտել, վոր մեր դիսցիպլինար քաղաքականությունը տեղերում կիրառելիս, յեղել են վորոշ թերություններ: Այդ թերություններից գլխավորն այն է, վոր հրամկազմի կողմից կիրառվող տույժերը կրել են միակողմանի և չափազանց պատժական թեքում, անտեսելով կարգապահական կանոնագրքում նախատեսված տույժերի մնացած տեսակները: Բացի այդ, պատիժների բավից դուրս թվով անցել է կրտսեր հրամկազմը, վորն և թուլացրել է նրա հեղինակությունը: Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում, այդ թերությունները վերացնելու համար, ուժեղացնել դաստիարակչական աշխատանքները կարգապահական միջոցների հետ միասին, պայքարելով հնարավոր չեղումների դեմ: Պատժի քաղաքականությունը չպետք է թուլացնի կրտսեր հրամկազմի հեղինակությունը, այլ ընդհակառակը, պետք է ուժեղացնի այն: Այդ նպատակով, անհրաժեշտ է, տեղերում ուսումնասիրել տույժերի և հանցանքների բնույթը: Անհրաժեշտ է, վոր այս ասպարեզում Քաղբաժնի, դիվիզիոնային և դատախազության կողմից



ձեռք առնվելիք միջոցները լինեն նույնպես համաձայնեցված, ինչպես մինչև հիմա յեր:

8. Յերկրային զորամասերի շինարարության ասպարեզում ձեռք են բերված մի շարք հաջողություններ յեվ նրա հետագա զարգացման համար հաստատուն նախադրյալներ: Գտնելով, վոր տեղական կազմակերպությունները մեծ անելիքներ ունեն յերկրային շինարարության խնդրում, կոնֆերանսը անհրաժեշտ է համարում հետագայում ե՛լ ավելի կանոնավորել կապը նրանց հետ:

Կոնֆերանսը գտնում է, վոր ամառվա հավաքույթում տեղական կազմակերպությունների մասնակցությունն անբավարար է յեղել, այդ նպատակով անհրաժեշտ է հետագա հավաքույթների նախապատրաստական աշխատանքները սկսել մի քանի ամիս առաջ:

Բացի դրանից, կուսակցական ընկերները անկանոն են հաճախել հավաքույթներին: Անհրաժեշտ է համապատասխան կուսմարմինների միջոցով, կուսակցականների և կոմյերիտականների կանոնավոր մասնակցության համար, ձեռք առնել համապատասխան միջոցներ:

9. Նախակոչային պատրաստության ասպարեզում պետք է արձանագրել, վոր վարժակայանները գտնվում են նյութական անմխիթար պայմաններում, բավարար չափով կահավորված չեն, կոմյերիտմիության տեղական կազմակերպությունները մոտ չեն կանգնած նախակոչային պատրաստության գործին: Կոնֆերանսը անհրաժեշտ է համարում, վոր Քաղբաժինը, այդ բացերը վերացնելու նպատակով ձեռք առնի համապատասխան միջոցներ:

10. Քաղաքացիական կազմակերպությունները վորոշ չափով մասնակցում են ռազմական շինարարության գործին: Այդ կազմակերպությունների կենտրոնական մարմինները բավականին մոտեցել և զբաղվում են ռազմական շինարարության խնդիրներով: Հետագայում նրանք պետք է ձգտեն հասարակական կարծիք ստեղծել ռազմական շինարարության հարցի շուրջը և ամեն կերպ ուժեղացնեն ռազմական պրոպագանդան ազգաբնակչության մեջ: Կուսակցական և Խորհրդային մարմինները պիտի ամենայն կերպ օժանդակեն Ռազմաքիմական Ընկերության ընդլայնման ու նրա աշխատանքների խորացման գործին:

11. Առանձին նշանակություն տալով զինկոմատների և յերկրային վարչության (իբրև զորահավաքային հաշվետման օրգանների) աշխատանքին, կոնֆերանսը անհրաժեշտ է գտնում ուժեղացնել Քաղբաժնի ղեկավարությունն ինչպես քաղաքական, այնպես էլ կուսակցական գծով: Հիշյալ օրգաններում անհրաժեշտ է ուժեղացնել կուսակցական աշխատողների կորիզը:

12. Ազգային փոքրամասնություններին Դիվիզիայում զորակոչելու փորձն ընդհանուր առմամբ տվել է դրական հետևանքներ: Սակայն անհրաժեշտ է, վոր տեղի Քաղբաժինը միջոցներ ձեռք առնի ազգային փոքրամասնությունների համար պատրաստված հրամ-քաղկազմ և մայրենի լեզվով դրականություն հայթայթելու խնդրի վրա և հարմարեցնի լենանկյունները նրանց ազգային առանձնահատկություններին:

13. Կոնֆերանսը արձանագրում է, վոր վերջին տարում Դիվիզիայի քաղկազմի վորակը բավականին



բարձրացել է: Սակայն, վերջինս դեռ բավականաչափ կայունացման չի յենթարկվել, արժանի չափով չի ռազմականացել: Մինչ մեր քաղաշխատավորներն ամբողջապես չռազմականանան, անիմաստ կը լինի խոսել քաղաքական ու ռազմական աշխատանքի սերտ կապակցման մասին: Կոնֆերանսը կուսկազմակերպության ուշադրությունը հրավիրում է այդ հանգամանքի վրա և առաջարկում՝ մոտ ապագայում վերացնել վերը հիշված թերությունը:

14. Կուսաշխատանքների ասպարեզում կոնֆերանսն արձանագրում է հետևյալը—մեր կազմակերպությունը 4-րդ կոնֆերանսից հետո աճել է մեծ չափով: Աճման գիծը տարվել է միանգամայն ճիշտ: Ներկայումս համարյա թե ամբողջ Դիվիզիայում ստեղծվել է վաշտային (ու նրանց հավասար) բջիջների ցանց: Կուսակցական մասսայի քաղաքական պատրաստությունը, շնորհիվ մեր կուլտ-լուսավորական աշխատանքների կանոնավորման, բավականաչափ բարձրացել է: Կուսբջիջների քարտուղարների կազմի վորակը նույնպես: Այժմ մի շարք բջիջների քարտուղարներ՝ շարքային բանակայիններից են: Կուսակցական դիսկուսիաների ընթացքում, կուսկազմակերպությունները, ընդհանուր առմամբ հեռու մնալով գաղափարական թեքումներից, հայտնաբերել են իրենց ամրությունն ու կայունությունը:

15. Հաճախ պատահում է, վոր կուսկազմակերպության ղեկավար տարրը կտրվում է կուսակցական աշխատանքի ընդհանուր խնդիրներից և պարփակվում զորամասի շրջանակներում: Մյուս կողմից, մեր բջիջները մինչև այժմ չեն կարողանում իրենց աշ-

խատանքները կապել զորամասի առօրյա կյանքին, վորի հետևանքով ստեղծվում է ընդհանուր կտրվածություն, միապաղաղություն և այլն: Անկուսակցական մասսան դեռ լրիվ չափով չի ընդգրկված մեր կողմից, դեռ թույլ է դրված անկուսակցականների անհատական մշակման գործը, դեռ քիչ նվաճումներ կան կուսակցական ղեկավարության ասպարեզում:

16. Արձանագրելով այս բոլորը, կոնֆերանսը անհրաժեշտ է համարում, վերացնել նկատվող բոլոր թերությունները: Յերբեք չմոռանալով այն պայմանները, վորի մեջ աշխատում ենք մենք, յերբ ամբողջ աշխատանքը ծայրահեղ կենտրոնացման և յենթարկված—դեպի իր պարտականությունները ցույց տված յուրաքանչյուր անարխիստական, անհատական, մանր-բուրժուական վերաբերմունք կարող է բարոյալքել բանակի վողնաշար կուսկազմակերպությանը—այդ պայմաններում, անհրաժեշտ է ամբողջովին համաձայնեցնել ու շաղկապել ներկուսակցական փոխհարաբերությունների խնդիրը բանակի միջավայրին:

Հետագայում մեր հիմնական խնդիրը պետք է լինի—ե՛լ ավելի կենդանացնել կուսակցական աշխատանքը, ե՛լ ավելի կապել այն զորամասի կյանքին, ու վորակապես ամրացնել մինչև այժմ ձեռք բերված քանակային նվաճումները:

17. Կոմյերիտական աշխատանքի ասպարեզում նվաճում պետք է համարել այն, վոր 4-րդ դիվ-կոնֆերանսի կողմից նկատված բացերը — (այդ թվում տված հրահանգների կիրառման հետևանքով) հնարավոր է յեղել վերացնել: Այժմ, կոմյերիտական մասսան, համեմատաբար ավե՛լի լավ դրության մեջ



է, քան անցյալ տարի յեր: Գոյություն ունի խմբակների բավականաչափ հաստատուն ցանց, ստեղծված է կազմակերպիչների բավարար կադր:

Հետագայում անհրաժեշտ է ավելի ուժեղացնել ընդունելությունը ԼԿՅԵՄ մեջ, կազմակերպիչների կադրի վորակը բարձրացնել, ամենախիստ կերպով պայքարել կոմյերիտականների անդիսցիպլինարության դեմ, ավելի ու ավելի աշխուժացնել կոմյերիտական աշխատանքը:

18. Ագիտպրոպ աշխատանքների ասպարեզում, կոնֆերանսը գտնում է, վոր քաղպարապմունքների խմբակային սիստեմը և կոմպլեկսային մեթոդը կիրառելու ասպարեզում, նվաճումներ կատարվել են: Անհրաժեշտ է, վորպեսզի Քաղբաժինն ընդհանուր կուրս վերցնի խմբակավարների կադրի հետագա կայունացման և վորակավորումը բարձրացնելու ուղղությամբ: Խմբակավարների մեթոդական պատրաստության խնդիրը դեռ պահպանում է իր հրատապությունը և Քաղբաժնի հոգատարության առարկա պետք է լինի:

Կուս-լուսավորության ասպարեզում անհրաժեշտ է շարունակել կուսդպրոցների պարապմունքները կանոնավոր հունի մեջ դնելու և ղեկավարների կադրն ուժեղացնելու աշխատանքները: Կուսլուսավորության ծրագրին անհրաժեշտ է ավելացնել Հայաստանի Կոմունիստական կուսակցության և Հայաստանի ու Անդրկովկասի հեղափոխական շարժումների պատմությունը:

Արտադպրոցական աշխատանքի ասպարեզում, անհրաժեշտ է, վորպեսզի Քաղբաժինն իր աշխատանքների ընթացքում առանձին ուշադրություն դարձնի

1003
13084

այն ձևերի ու մեթոդների վրա, վոր ամենից հետաքրքրում են կարմիր բանակայիններին (կինո, ռադիո, և այլն), ընդհանրապես անհրաժեշտ է ուժեղացնել կուսղեկավարությունն արտադպրոցական աշխատանքների մեջ:

19. Հրատարակչության ասպարեզում մեծ նվաճումներ են կատարվել: «Կարմիր Զինվոր»-ը հրատարակվում է շաբաթը յերկու անգամ. հրատարակվել են մի շարք գրքեր ու գրքույկներ: Անհրաժեշտ է հետագայում բարելավել թերթերի բովանդակությունը, ուժեղացնել խմբագրության աշխատանքը և զինթղթակիցների ղեկավարությունը: Անհրաժեշտ է նույնպես ուժեղ հսկողություն ունենալ Հայկական Թազմական խմբագրական կոլեգիայի գործունեության վրա և նրա ընդհանուր ղեկավարությունն հանձնել Քաղբաժնին:

20. Կոնֆերանսը գտնում է, վոր զորամասերի ղեկավարության գործում, քաղբաժինը բավականին նվաճումներ է ունեցել: Անհամեմատ կրճատվել է դրբավոր ղեկավարությունը և ընդհակառակն՝ ուժեղացել անմիջական-կենդանի ղեկավարությունը:

Հետագայում, ղեկավարության այդ ընթացքն է՛լ ավելի պետք է ուժեղացվի:

---

## Բ Ա Ն Ա Ձ Ե Վ

### Դիվիզիայի Կուսհանձնաժողովի զեկուցման առթիվ:

---

Կոնֆերանսը, դիվկուսհանձնաժողովի գործունեությունը համարում է բավարար և վարած գիծը ճիշտ:

Մեր կուսկազմակերպությունը վերջին տարում աճել է գլխավորապես ի հաշիվ գյուղացիության չքավոր և միջակ մասի:

Ընդունելության խնդրում գիծը յեղել է միանգամայն ճիշտ: Այն օբյեկտիվ պայմանները, վոր ստեղծեցին ավելի արագացնել ընդունելությունը և վորի հետևանքով առանձին անհատների նկատմամբ տեղի ունեցան սխալներ, լինելու յեն և ապագայում, վորի համար անհրաժեշտ է ընդունվողի ուսումնասիրությունը կատարել վոչ միայն զորանոցում, այլև գյուղում, հաշվի առնելով նրա հասարակական քաշն ու հեղինակությունը: Ճիշտ դրված ուսումնասիրությունը, հնարավորություն կը տա կատարել ավելի սիստեմատիկ ընդունելություն:

Ընդունելությունների ընթացքում, բացի պահանջվող ընդհանուր խնդիրներից, պետք է մեծ չափով ուշադրություն դարձնել ընդունվողի վորակի վրա (աշխատանքի ընդունակությունը, դիսցիպլինան, ռազմունակությունը, և այլն):

Ընդունելությունների ընթացքում ընդհանրապես, և մասնավորապես հրամքաղկազմի նկատմամբ, պետք լինել զգույշ, ուսումնասիրել բոլոր այն պատճառները, վորից դրդված նրանք աշխատում են մտնել կուսակցության մեջ: Կուսակցության մեջ մտնելու վորոշ ձգտում կա նաև այն էլեմենտների մեջ, վորոնք անցանկալի յեն մեր կուսակցության համար: Անհրաժեշտ է, վոր տեղերը խիստ նկատի առնեն այս հանգամանքը:

Արձանագրելով մեր կուսակցության ընդհանուր առմամբ առողջ լինելու փաստը, կոնֆերանսը միաժամանակ չեշտում է, վոր կուսկազմակերպության մեջ դեռևս նկատելի յեն վորոշ հիվանդոտ կողմեր, վորն արտահայտվում է թմրածության, դիսցիպլինայի անհրաժեշտ բարձրության վրա չլինելու, կոմունիստական սպայկայի թուլության մեջ:

Կոմյերիտական և անկուսակցական մասսայի հասարակական ակտիվության աճման հետևանքով, կուսակցական անմիջական ղեկավարությունից չեղվելու տենդենց է նկատվում: Անհրաժեշտ է աշխատանքները դասավորել այնպես, վոր հնարվոր լինի լիակատար կերպով ընդգրկել այդ մասսային:

Մեր կազմակերպության ցավոտ կողմերից մեկն էլ այն է, վոր մեզ դժվար է հաջողվում կանոնավորել անդամների և թեկնածուների քանակական փոխհարաբերության խնդիրը և չարունակ թեկնածուները քանակապես գերակշռում են անդամների թվին: Թեկնածուական ժամանակամիջոցը լրիվ չի ոգտագործվում թեկնածուներին դաստիարկչորեն նախապատրաստելու՝ անդամ փոխադրելու համար: Պետք է աշխատել անդամության փոխադրումը կատարել ժամանակին:



Մյուս խնդիրը, դա մեր կազմակերպությունների վորոշ ծածկամտությունն է, վորը հետևանք է մի կողմից դիսցիպլինայի վորոշ թուլության և մյուս կողմից՝ բավականաչափ կոմունիստական դաստիարակության բացակայության: Վոչ մի աշխատանք, վոչ մի խնդիր—դրական թե բացասական, չպետք է վրիպի կուսակցության կոլլեկտիվի տեսողությունից:

Կենդանի կապի ու ղեկավարության տեսակետից, անհրաժեշտ է, վոր՝ ա) Ըստ հնարավորության, կուսհանձնաժողովի նիստերը տեղի ունենան գործամասերում. բ) Կուսհանձնաժողովի քարտուղարը և անդամները հաճախակի մասնակցեն տեղական կազմակերպությունների ժողովներին. գ) Զինվորական մասերում հաճախ լուսաբանել կուսհանձնաժողովի աշխատանքներն ու ընդհանուր կուսակցական խնդիրները:

Կուսակցական հանձնաժողովի ղեկավարության տեսակետից, անհրաժեշտ համարել, վոր կուսհանձնաժողովի նիստերում սիստեմատիկ լսվեն առանձին բջիջների, կուսբյուրոների քարտուղարների և զինկոմների (նաև անհատ կուս. ընկերների) զեկուցումները: Բջիջներում ու կոլլեկտիվներում, վոչ շուտ, քան 3 ամիսը մեկ անգամ, դնել կուսհանձնաժողովի զեկուցումը:

Ունենալ առնվազն 3 ամիսը մեկ անգամ պլենում, մասնակցությամբ բջիջների քարտուղարների, կուսբյուրոների, զինկոմների և առանձին ընկերների:

Հիվանդոտ յերևույթների դեմ կռվելու համար, անհրաժեշտ է, որ՝ նախ տեղերը ժամանակին հաշվի առնեն այդ աննորմալ յերևույթները և շուտափույթ միջոցների դիմեն, առանց հետևանքի, չթողնելով և ոչ մի հանցանք. յերկրորդ՝ կուսհանձնաժողովն իր հերթին պետք է (դաստիարակչական միջոցներից բացի) կտրուկ միջոցներ ձեռք առնի: Այստեղ, պատասխանատու և շարքային ընկերների նկատմամբ տարբեր մոտեցում պետք է լինի:

---

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

---

1. Համ. Կ.Կ 14-րդ համագումարը տվեց ներկուսակցական դրության գնահատականը, կատարեց անցած տարվա ընթացքում տեղի ունեցած կուս. շինարարության հաշվեհարդարը և նշեց հետագա աշխատանքի գիծը: Համագումարը հավանություն տվեց ներկուսակցական դեմոկրատիայի մասին կենտկոմի նոյեմբերյան դիմումին և առաջարկեց կուսակցական կազմակերպություններին այդ բնագավառում նկատի ունենալ հետևյալ խնդիրները. ա) լայն խավերի ակտիվության բարձրացումը կուսակցական քաղաքականության կարևորագույն հարցերի քննության առնելու և լուծելու գործում. բ) կուսակցական ղեկավարող մարմինների ընտրողականության հետևողական կիրառումը, առաջ քաշելով նոր ուժեր ղեկավարող աշխատանքի համար, ընդլայնելով կուսակտիվն ու կուսակցական նոր կադրեր ստեղծել՝ հներին օգնելու համար. գ) կուսակցական ակտիվի փորձի, մանավանդ նրա տեսական մակարդակի բարձրացումը. դ) լենինյան ուսմունքի հիմունքների տարածումը կուսակցության լայն խավերում:

Կուսակցության ամրացումն ու նրա ղեկավարների ուժեղացումը մեր շինարար աշխատանքի բոլոր

բնագավառներում՝ ներկայիս բարդ պայմաններում անհրաժեշտ է ավելի, քան յերբեւէ: Կուսակցության կազմի կանոնավորման բնագավառում համագումարն անհրաժեշտ է գտնում այնպիսի քաղաքականություն վարել, որն ուղղված կը լինի կուսակցական կազմակերպությունների կազմի որակական բարձրացմանը. կուսակցության շարքերն ավելի ու ավելի մեծ թվով բանվորներ ընդունելուն և մշտապես կուսակցական պրոլետարական կորիզի տեսակարար կշռի բարձրացմանը: Համագումարը մատնանշեց, որ մեր կուսակցության անցած շրջանի աշխատանքում ամենակարևորն ու ամենաբնորոշը պետք է համարել բանվորական և գյուղացիական մասսաների ակտիվության աճումը, և դրա հետևանքով մասսայական կազմակերպությունների աշխուժացումը: Մենք գրել ենք ու դնում ենք հետևյալ խնդիրը — աշխատավոր մասսաների այդ հարաճուն ակտիվությունը մտցնել խորհրդային հունի մեջ և ուղղել այդ ակտիվությունը պրոլետարական հեղափոխության և սոցիալիզմի շինարարության ուղին: Այդ նշանակում է, որ կուսակցությունը՝ որպես բանվոր դասակարգի առաջապահ, ներկայումս իր բացառիկ ուշադրությունը պետք է դարձնի, թե՛ բանվորների անկուսակցական լայն խավերի և թե՛ գյուղում բատրակ, չքավոր, ինչպես նաև միջակ գյուղացիների կոմունիստական դաստիարակության խնդիրների վրա:

Այդ տեսակետից մեծ աշխատանք է ընկնում կուսակցության բանակային ջոկատի վրա, որովհետև Կարմիր Բանակը հիմնական լծակներից մեկն է կուսակցության՝ գյուղում վարած քաղաքականության ժո-



ղովրդականացման և ամրացման համար: Դիվիզիայի մարտունակության ամրացման հետ միասին, այս խնդիրը Դիվիզիայի կուսկազմակերպությունները չպետք է աչքաթող անեն: Բանվոր դասակարգի և գյուղացիության մեջ տեղի ունեցող քաղաքական ակտիվության ընդհանուր վերելքը, բնականաբար, իր արտացոլումն է գտնում նաև մեր Դիվիզիայի շարքերում:

Վերոհիշյալ մոմենտները լիովին պետք է հաշվի առնվեն մեր Դիվիզիայի կուսակցական կազմակերպությունների աշխատանքի ընթացքում, նկատի ունենալով բանակային կազմակերպության յուրահատուկ պայմաններն ու առանձնահատկությունները:

2. Կուսակցության 14-րդ համագումարի հիմնական հրահանգները մեր Դիվիզիայի պայմաններում կիրառելիս պետք է հաշվի առնել.

ա) Բջիջների կազմի փոքրաթիվ և յերիտասարդ լինելը:

բ) Կուսակցական-կազմակերպչական աշխատանքի բացակայությունը նրա անդամների զգալի մասի մեջ:

գ) Հրամանատարական, քաղաքական կազմի մեծ տոկոսը և ռուսական կուսակցականների թույլ տեսակարար կշիռը:

դ) Բջիջների կազմի գյուղացիական և այլ տարրերի գերակշռումը:

յե) Բջիջների անդամների զարգացման թույլ մակարդակը:

զ) Բջիջների անդամների վոչ բավարար ուսումնականացումը և նրանց համեմատաբար թույլ ղեկավարող կազմը:

է) Մի քանի զորամասերում գումարտակային և յերկվաշտ բջիջների գոյությունը:

ը) Վորպես ընդհանուր յերևույթ, մեր Դիվիզիայում կազմակերպչական քաղաքական աշխատանքը զորամասի ներքին կյանքին և կենցաղին չհամաձայնեցնելը:

թ) Բջիջների ներկուսակցական աշխատանքի վորոշ բացակայությունը:

ժ) Աշխատանքի փորձի բավարար հաշվեառման սահմանափակումը, վորի հետևանքն է անկուսակցական մասսայից կտրված լինելն ու վերջինիս վոչ լրիվ ընդգրկումը:

3. Կուսակցական կազմակերպությունների աճման կանոնավորման ասպարեզում անհրաժեշտ է ղեկավարվել բանակի քաղաքական մարմինների ցուցումներով, կապելով այդ հարցը ՀԿԿ ընդհանուր գծի հետ և հաշվի առնելով Դիվիզիայի ներքին պայմանները:

Կուսակցության մեջ ընդունելության ժամանակ առաջնորդվել՝ կուսակցականների թիվը շարքային անդամներով ավելացնելու սկզբունքով: Առաջին հերթին կուսակցության շարքերը քաշել բանվորներին, բատրակներին, չունևոր գյուղացիներին և այլ՝ միջակներից լավագույն, ստուգված մասին: Բոլոր դեպքերում առավելություն տալ ԼԿՅԵՄ անդամներին, ամենից առաջ 1902 թվի ծնվածներին: Կուսկազմակերպությունները պետք է նախապես մանրազննին կերպով ուսումնասիրեն կուսակցության մեջ մտնողներին՝ թե՛ նրանց զորամասի անհատական մշակման նյութերի և թե՛ տեղական կուսկազմակերպություններից ստացած այն նյութերի հիման վրա, վորոնք բնութագրում են ընդունվողներին:



Պետք է ուշադրություն դարձնել, վոր ակտիվ և պատրաստի թեկնածուները կուսակցության անդամ փոխադրվեն ժամանակին:

4. Բջիջների քարտուղարների ինստիտուտի վրա չպետք է նայել, վորպես մի վայրի վրա, ուր պետք է ընտրել առաջ քաշելու համար:

Բջիջների քարտուղարներ և բյուրոների անդամներ պետք է ընտրվեն հեղինակավոր ընկերներ, դրա հետ միասին առավելություն պիտի տալ կուսակցության սոսկական անդամներին: Նախընթաց շրջանի կուսաշխատանքի մեծ պակասությունը պետք է համարել բջիջների քարտուղարների հոսունությունը: Անհրաժեշտ է ապագայում ամեն կերպ ձգտել, բջիջների քարտուղարների լիակատար կայունացման, դրա համար՝ վերընտրություններ չկատարել մինչև սահմանված ժամանակի լրանալն առանց ծայրահեղ անհրաժեշտության: Պետք է լուրջ ուշադրություն դարձնել նաև կուսաշխատանք վարելու համար բջիջների քարտուղարների պատրաստականության վրա: Պետք է վորոշակի սահմանագծել ղեկավարության աշխատանքը գնդի բյուրոյի և բջիջների միջև: Գնդի բյուրոյի բջիջներին ցույց տված ղեկավարությունը պետք է նպաստի բջիջների անդամների ինքնագործունեության և ակտիվության առավելագույն զարգացման:

Բջիջների քարտուղարներն իրենց աշխատանքին վերաբերող հարցերին պետք է հիմնովին ծանոթ լինեն:

5. Դումարտակային և յերկվաշտ բջիջներից վաշտային բջիջներ կազմակերպելու ասպարեզում կան վորոշ նվաճումներ:

Անհրաժեշտ է աշխատանքն այդ ուղղությամբ շարունակել Դիվիզիայի բոլոր զորամասերումն էլ անխտիր վաշտային բջիջներ ունենալու համար: Սակայն նախքան այդ խնդիրն իրագործելը, պետք է կազմակերպությունն աճի քանակով, վորից հետո արդեն հին, ավելի խոշոր բջիջի կազմից անջատվում է նոր վաշտային բջիջը:

Կուսակցական ցանցի ամեն մի փոփոխություն պետք է կատարվի Քաղբաժնի գիտությամբ և Դիվիզիայի կուսակցական հանձնաժողովի հաստատությամբ:

6. Բջիջում կուսաշխատանքը պատշաճ կերպով դնելու վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել: Մինչև այժմ մեր բջիջները չեն կարողացել բավականաչափ համաձայնեցնել կազմակերպչական-քաղաքական աշխատանքը զորամասի վարժական-շարային և ներքին կյանքի հետ:

Բջիջների մեծամասնության աշխատանքների ծրագրերը պարունակում են կուսաշխատանքի ընդհանուր մոմենտները և, ընդհակառակը, բավականաչափ ուշադրություն չեն դարձնում տեղական բնույթ կրող այն կոնկրետ հարցերին, վոր առաջադրում է զորամասի կյանքը, կենցաղն ու ուսուցումը: Ուշադրության կենտրոնն անհրաժեշտ է փոխել բջիջային աշխատանքի հետագա կենդանացման և վերոհիշյալ մոմենտի վրա:

7. Կուսաշխատանքի փորձի հաշվառման հարցի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել, պարզել կուսաշխատանքի թերությունները, նվաճումները, նրա նոր ձևերն ու մեթոդները: Փորձի հաշվառումը լավ հիմ-



քերի վրա դնելու նախադրյալներից մեկը տեխնիքական գործի կազմակերպումն է վաշտային բջիջում և կուսբյուրոյում: Անպայման պետք է կազմել բոլոր նիստերի արձանագրությունները, գրի առնել բոլոր վորոշումները:

8. Զորամասի կարգապահության ամրացումը, այդ բնագավառում տեղի ունեցող բացասական յերևույթների դեմ մղվելիք պայքարը (ինչպես ասված է Քաղվարչության կից կայացած բջիջների քարտուղարների խորհրդակցության բանաձևում) պետք է կենտրոնական տեղերից մեկը բռնեն Դիվիզիայի բոլոր կուսկազմակերպությունների աշխատանքներում:

Կուսակցականը պետք է կարգապահության, պետերի հրամաններն ու կարգադրությունները և ծառայության բոլոր պահանջները կատարելու նկատմամբ որինակ ծառայի: Կենդանի որինակների հիման վրա կուսբջիջները պետք է բացատրեն կարմիր բանակայիններին կարգապահության վերաբերյալ իրենց ծավալած աշխատանքի մասին: Հետագայում, այդ ասպարեզում պետք է հատուկ ուշադրություն դարձնեն դաստիարակչական աշխատանքների ուժեղացման վրա: Կուսկազմակերպությունները պետք է ոգտագործեն իրենց ամբողջ ազդեցությունը հրամանատարական կազմի հեղինակությունը բարձրացնելու համար:

9. Ծրագրային աշխատանքի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել, վորպեսզի յուրաքանչյուր բջիջ ունենա իր աշխատանքի ծրագիրը: Կուսբյուրոների աշխատանքների ծրագրերի համաձայնեցումը մեծ նշանակություն ունի ամբողջ կուսակցական աշխատանքի համար: Կուսբյուրոների կողմից պատրաստի ծրագրերի մատու-

ցումը բջիջներին, նսեմացնում է բջիջների ինքնագործունեությունն և նրանց վարժեցնում է վերից ստացած հրահանգների զուտ տեխնիկական կատարման: Մյուս կողմից, բյուրոները պետք է իրենց ոժանդակությունը և ընդհանուր ղեկավարությունը ցույց տան և ծրագրի կազմումն ամբողջապես չթողնեն բջիջների քարտուղարների վրա:

Կուսաշխատանքի ծրագրերը (թե՛ բյուրոյի և թե՛ բջիջների) պետք է կոնկրետ լինեն, հաշվի առնելով նրանց իրագործման հնարավորությունները:

10. Բջիջի աշխատանքի քողարկված վարչականացման յերևույթները, վորոնց մասին ասված է նաև բանակային 3-րդ կոնֆերանսի բանաձևում, նկատվում են նաև մեր Դիվիզիայում: Մեր Դիվիզիայի կազմակերպությունն այնքան աճել է, վոր անհրաժեշտ է նրան հնարավորություն տալ զարգացնելու իր ինքնագործունեությունը: Պետք է կռվել այնպիսի յերևույթների դեմ, յերբ կուժողովներում հանձինս կուսհրամանատարի, կոմիսարի և կուսակցության այլ անդամների, բջիջի անդամները տեսնում են վարչական մի անձ, և վոչ թե հեղինակավոր կուսակցական մի ընկեր:

11. Անկուսակցական մասսաների ակտիվության անընդհատ աճման հետևանքով, պետք է հատուկ ուշադրություն դարձնել կուսկազմակերպության կողմից անկուսակցականների մեջ տարվող աշխատանքի վրա: Պետք է չեշտել, վոր նախընթաց շրջանում անկուսակցականների մեջ տարվող աշխատանքի վրա ամեն անգամ պատշաճ ուշադրություն չի դարձված:

Մեր բջիջները մեծ մասամբ բավականացել են միայն ներկուսակցական աշխատանքի հարցերով: Դրա հետե-



վանքն այն է յեղել, վոր վորոշ չափով անջատում է ստացվել անկուսակցական մասսայից: Բջիջի առողջ ղեկավարությունը քաղլուս. պարապմունքների և ինքնագործունեության ու հասարակական աշխատանքների մեջ պետք է կարևորագույն տեղը բռնի բջիջի աշխատանքներում:

Անկուսակցական կարմիր բանակայիններին ուսումնասիրելու և նրանց մեջ աշխատանք տանելու համար մեծ դեր է խաղում կուսակցության անդամների ու թեկնածուների ամրացումն առանձին անհատների կամ կարմիր բանակայինների խմբակներին:

Կուսկազմակերպությունների կողմից անկուսակցականների մեջ տարած աշխատանքի և անկուսակցականներին ընդգրկելու համար լավագույն մեթոդներից մեկն էլ հասարակական կազմակերպություններն են: Մասսաների և մանավանդ նորեկների ակտիվության աճման հետևանքով կուսկազմակերպությունների առաջ խնդիր է դրվում՝ հմտորեն կազմակերպել և ուղղություն տալ այդ ակտիվությանը:

Պետք է հասարակական կազմակերպությունների մեջ քաշել բոլոր կարմիր բանակայիններին, և պահպանել կամավորական սկզբունքը:

12. Քաղաքացիական կազմակերպությունների հետ ունեցած կապի բնագավառում կան վորոշ նվաճումներ: Մեր խնդիրն է հետագայում խորացնել և ամրացնել այդ կապը: Քաղաքացիական կազմակերպությունների հետ ունեցած կապը պետք է ամենից առաջ արտահայտվի աշխատանքի փորձի փոխադարձ ոգտագործմամբ:

13. Լագերային շրջանում կուսաշխատանքի բովանդակությունը տարբերվում է ձմրան շրջանից:

Այս մոմենտն ընթացքում տարրը բավականաչափ հաշվի չէր առնված։

Ամրան շրջանի կուսաշխատանքների բովանդակության բնորոշ մոմենտը պետք լինի զորամասերի շինարարության հարցերի քննությունը, մանավանդ կարգապահության հարցերը։ Որակարգերում պետք է հմտորեն լուսաբանել թե՛ ընդհանուր կուսակցական և թե՛ տեղական-ռազմական հարցեր։ Աշխատանքի փորձը ցույց է տալիս, վոր միշտ էլ նման փոփոխությունները (ձմրան բնակարաններից լագեր դուրս գալը, զորաշարժերը, կամ ընդհակառակը՝ լագերից վերադառնալը) առաջացնում է վորոշ հապաղումներ, խախտվում է կուցանքը և այլն։ Առաջիկայում անհրաժեշտ է նախապատրաստական աշխատանքը կատարել այնպես, վոր տեղի չունենա վերոհիշյալ աննորմալ յերևույթները։

14. Վերևում մատնանշված հանգամանքներն ու թերությունները կադրային զորամասերի ներկուսակցական աշխատանքի մեջ ընդհանուր առմամբ տեղի յեն ունենում նաև յերկրային զորամասերում։ Յերկրային զորամասերն իրենց աշխատանքի բնույթով հատուկ ղեկավարություն և Քաղբաժնի կողմից հատուկ ուշադրություն են պահանջում ներկայումս։

Հիմնականում յերկրային գնդի կուսակցական բջիջն ընդհանուր հավաքույթների ժամանակ պետք է վաշտային բջիջը լինի։ Քանի վոր հավաքույթից-հավաքույթ վաշտերում բջիջներ չկան, ուստի նախապես պետք է ծրագրել վաշտային բջիջների ծավալման սխեման։

Կուսաշխանքի հիմնական խնդիրներն ընդհանուր հավաքույթների ժամանակ, բացի կադրային զորամասերի կուսկազմակերպությունների ընդհանուր խնդիրներից, հետևյալն են. 1) Սերտ կապ հաստատել տեղական կուսկազմակերպությունների հետ, նրանց մասնակից դարձնելով իրենց աշխատանքին, 2) Լայն չափով ժողովրդականացնել յերկրային կազմակերպությունների գաղափարը բնակչության մեջ, 3)Ամրացնել ներկուսակցական կապը մշտական և փոփոխական կուսակցական կազմերի միջև, 4) Լրիվ ոգտագործել կուսակցական աշխատանքներում փոփոխական կազմի բոլոր կուսակցականներին և կուսհրամանատարներին, 5) Խստիվ հետևել, վոր կոմունիստ-փոփոխականները պահպանեն զինվորական կարգապահությունը, 6) Սիստեմատիկ կերպով կռիվ մղել ընդհանուր հավաքույթներին անճշտապահ կերպով ներկայանալու, դեպի ծառայությունն անփույթ վերաբերմունքի և նման այլ յերևույթների դեմ։



---

# ԱԳԻՏ-ՊՐՈՊ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Քաղլուս-աշխատանքների հիմնական բովանդակությունը տրված է կարմիր բանակայինների քաղպարապմունքների յերկամյա ծրագրում: Բացի այդ, Համ. Կկ 14-րդ համագումարի վորոշումների պարզաբանումն անկուսակցականների շրջանում, նրանց բազմակողմանի ուսումնասիրությունը կուսակցականների և կոմյերիտականների կողմից, կազմում են ագիտ-պրոպ աշխատանքների հիմնական բովանդակությունը:

2. Կարմիր բանակայինների քաղաքական և հասարակական ակտիվությունը, վերջին զինակոչի հետևանքով բանակ յեկած ավելի ակտիվ, կրթված և զարգացած տարրին ընդգրկելու, նրանց ակտիվությունը խորհրդային հունի մեջ դնելու և նրանց գիտակցությունն ավելի հետամնաց կարմիր բանակայինների համար օգտագործելու խնդիրը, ներկայումս իրենց ամբողջ մեծությամբ կանգնած են մեր քաղ-ապարատի առաջ: Այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ է, վոր քաղաշխատողները և հրամկազմն ունենան պահանջված չափով հանրակրթական և քաղաքական պատրաստություն: Դրա համար է, վոր ներկայումս ավելի լուրջ, քան յերբևիցե պետք է դնել քաղ և հրամկազմի վերապատրաստության հարցը: Սակայն կարմիր բանակա-



յինների ակտիվությունը, նրանց քաղաքական և հանրակրթական պատրաստության աճումը վոչ թե անցողիկ յերևույթ է, այլ ընդհակառակը, տարեց-տարի ավելանալու յե: Այդ պատճառով հենց ներկայումս ամենալուրջ ուշադրություն պետք է դարձնել մեր ռազմական և ռազմա-քաղաքական դպրոցների վրա, վորտեղից դուրս են գալու հրամանատարների և քաղաշխատողների նորանոր կադրեր: Անհրաժեշտ է այդ դպրոցներում ընդունելության պահանջները բարձրացնել: Ռազմական և ռազմա-քաղաքական դպրոց ընդունվողը անպայման պետք է քաղաքականապես զարգացած լինի և հանրակրթական առարկաներից կատարելապես գրագետ: Բացի այդ, ընդունելությունն այդ դպրոցներում առավելապես պետք է կատարվի Դիվիզիայի կողմից:

3. Բավարար չափով հայերեն լեզվով գրականություն չունենալու պատճառով, անհրաժեշտ է, վորպեսզի ռուսաց լեզվի ուսումնասիրությունը թե՛ Դիվիզիայում և թե՛ մանավանդ ռազմական դպրոցներում անհրաժեշտ բարձրության վրա դրվի: Այդպիսով հրամ. և քաղկազմը հնարավորություն կունենան օգտվելու ռուսական հարուստ գրականությունից: Նույն թափով պետք է ուսումնասիրվի և հայոց լեզուն, վորպես լայն բանակային մասսաներին մոտիկ հասկանալի և նրանց հետ կապ պահպանելու հիմնական միջոց: Այդ նպատակով ԽՍՀՄ ՀՌԽ 1925 թ. № 1515 հրամանով նախատեսված ծրագրի մեջ պետք է մտցնել հայոց լեզուն:

4. Վաշտի քաղ-լուսաշխատանքների ղեկավարը և տան ավագը ներկայումս հանդիսանում է քաղղեկը: Յեվ քանի վոր այդ աշխատանքները շատ բազմակողմանի

յին, սպա և քաղլեկից ներկայումս համապատասխան հմտություն և գիտություն է պահանջվում: Քաղլեկը պետք է ունենա հանրակրթական–քաղաքական լավ պատրաստություն, մեթոդիկական հմտություն և հրահանգիչ լինելու կարողություն: Նա պետք է ղեկավարի վաշտի քաղպարապմունքների մեթոդական, արտադպրոցական վորջ աշխատանքը և կապի քաղպարապմունքները շարքային պարապմունքների հետ: Մինչդեռ մեր Դիվիզիայի քաղլեկների հիմնական մասը ներկայումս այս պահանջները բավարարել չի կարող: Այդ պատճառով նրան առավելագույն հնարավորություն պետք է տալ ինքնակրթությամբ պարապելու և այդպիսով լրացնելու իր գիտելիքների պակասը: Կայազորային մեթոդական խորհրդակցությունները պետք է նրան մեթոդական հմտություն տա: Ապագայում ռազմա–քաղ–դպրոցից բանակի ներկա պայմաններին համապատասխան քաղլեկներ ստանալու համար, անհրաժեշտ է, վոր դպրոցն ամենալուրջ ուշադրությունը դարձնի կուրսանտների մեթոդական պատրաստության վրա և գործնական քաղլուսաշխատանքները տանելու հմտություն տա նրանց: Դրա համար ռազմաքաղաքական դպրոցները պետք է ապահովվեն լավագույն դասախոսներով:

5. Քաղպարապմունքների խմբակային ձևը և դասակապետին խմբակի ղեկավար նշանակելու ընդհանուր գիծը, վոր ընդունված է ամբողջ Կարմիր բանակի հետ, նաև մեր Դիվիզիայում՝ հիմնականում արդարացրեց իրեն: Սակայն դասակապետների բավական խոշոր տոկոսը դեռ լիակատար կերպով չի տիրապետում քաղպարապմունքներ տանելու մեթոդներին և



ձևերին, չունի բավարար չափով հանրակրթական հաձախ նաև քաղաքական պատրաստություն: Այդ պատճառով դասակապետ–խմբակավարի համար գնդի մեթոդական պարապմունքները, հրահանգչական խորհրդակցությունները և ընթերցանության միջոցով ինքնազարգացում ձեռք բերելը կարևորագույն խնդիր է մեր Դիվիզիայի համար: Դասակապետների չափազանց շատ զբաղված լինելու հանգամանքը նույնպես ազդում է քաղպարապմունքների նորմալ ընթացքի վրա: Դրա համար անհրաժեշտ է, ամեն կերպ կրճատել դասակապետ–խմբակավարի կողմնակի աշխատանքները—ազատել նրան զանազան հանձնաժողովներից և այլն:

6. Քաղպարապմունքների ասպարեզում, խմբակային ձևին անցնելուց հետո, վորոշ նվաճումներ կատարվել են: Սակայն մինչև այժմ էլ կան մի շարք թերություններ. վոչ միայն դասակապետ–խմբակավարն է համեմատաբար թույլ պատրաստված քաղաքական և հանրակրթական տեսակետից, այլ նաև մնացած խմբակավարների մեծագույն տոկոսը:

Խմբակավարի աշխատանքը շատ անգամ հանձնարարվում է շարքային կ. բանակայիններին, քաղլեկներին, ուսուցիչներին և այլն: Ցել մինչև այժմ խմբակավարների կայուն կազմ ունենալու հնարավորություն չի յեղել: Անհրաժեշտ է ընդհանուր գիծ վերցնել խմբակավարների կայուն կազմ ստեղծելու համար: Քաղպարապմունքների մեթոդական կողմը մինչև այժմ էլ կաղում է: Կոմպլեքս մեթոդը, վորն իր կենսունակությունը ցույց տվեց բանակի պայմաններում, դեռ ամբողջապես չի յուրացված խմբակավարների կողմից: Անհրաժեշտ է հետագա սիստեմատիկ և ծրագրված աշ–

խաղանքների, փորձնական ու ցուցադրական դասերի միջոցով ավելացնել խմբակավարների մեթոդական պատրաստությունը: Անհրաժեշտ է (հնարավոր չափով) հայերեն լեզվով մեթոդական գրականություն հայթհայթել խմբակավարներին: Մեր հիմնական բացերից մեկն էլ այն է, որ հայերեն լեզվով քաղպարապմունքների համար չափազանց քիչ ձեռնարկներ կան: Եղած ձեռնարկներն էլ պետք եղած չափով չեն օգտագործվում մեթոդական կոմիսիաների և խմբակավարների կողմից, քաղպարապմունքների ընթացքում չափազանց քիչ են օգտագործվում նաև եղած գեղարվեստական կտորները: Անհրաժեշտ է, որպեսզի Քաղբաժինը միջոցներ ձեռք առնի հայթհայթելու պետք եղած քանակությամբ ձեռնարկներ, իսկ զորամասերի քաղաշխատողները պետք է օգտագործեն այն բոլոր ձեռնարկները, որոնք գոյություն ունեն հայոց գրականության մեջ: Անհրաժեշտ է նույնպես ծրագրված և սիստեմատիկ կերպով ձեռք բերել ցուցադրական ձեռնարկներ՝ քարտեզներ, դիագրամաներ, գլոբուսներ և այլն:

Դասարանները պետք է կահավորել ՀՌԽ-ի հրամաններով նախատեսված ցուցակի համաձայն:

7. Ավագ և միջին հրամանատարական կազմի քաղպատրաստության խնդիրը ձևակերպված է Միության Հեղափոխական Ռազմական Խորհրդի 1925 թվի № 1515 հրամանում: Ամեն կերպ պետք է աջակցել, որպեսզի ավագ և միջին հրամկազմը կարողանա լրիվ իրագործել այդ հրամանը: Պետք է հայթհայթել և հանձնարարել գրականություն ինքնազարգացման համար, զորամասերի ինքնազարգացման հանձնաժողովները, հրամկազմի քաղպատրաստության ղեկավարությունն իրենց



վրա պետք է վերցնեն: Առանձին ուշադրություն պետք է դարձնել կրտսեր հրամկազմի քաղպատրաստության վրա: Գնդային վարժական դպրոցները պետք է ապահովել պատրաստված դասախոսներով և քաղղեկներով: Կրտսեր հրամկազմի պարապմունքների համար պետք է հատկացնել լավագույն խմբակավարներ և ձեռք բերել նրանց համար ամեն տեսակի ձեռնարկներ:

8. Կուսակցական և միութենական լուսավորության ասպարեզում մենք զգալի հաջողություններ ենք ունեցել: Մենք ունենք կուսակցական առաջին և երկրորդ աստիճանի դպրոցների և միութենական դպրոցների հաստատուն ցանց: Պարապմունքներն այդ դպրոցներում ընթանում են կանոնավոր, առանց ընդհատումների: Սակայն այդ ասպարեզում նույնպես կան մի շարք թերություններ: Կուսակցական առաջին աստիճանի և միութենական դպրոցների ղեկավարների կազմի մեծագույն մասն այդ աշխատանքի համար թույլ է: Մի ընդհանուր և ընդունված մեթոդ, այդ դպրոցներում գոյություն չունի: Բոլոր դպրոցների համար չկա հաստատուն մի վայր, որը կահավորված լինի դպրոցական հարմարություններով: Կուսդպրոցների ծրագրի մեջ տեղական էլեմենտը գրեթե բացակայում է: Այդ թերությունները վերացնելու համար անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել կուս. և միութենական դպրոցների մեթոդական կողմի վրա, վերանայել ղեկավարների կազմը՝ փոխարինելով թույլերին ավելի ուժեղներով, յուրաքանչյուր զորամասում դպրոցների համար մշտական կահավորված սենյակներ ունենալ: շուտափույթ կերպով կուս-դպրոցների ծրագրի մեջ մտցնել տեղական մոմենտ (Հայաստանի Կոմկուսակ-

ցության պատմությունն և այլն)։ Դրա հետ միասին կուս-բյուրոները պետք է ուժեղացնեն իրենց ղեկավարությունը կուսդպրոցների վրա։

9. Արտադպրոցական աշխատանքը դեռ շարունակվում են մեր Դիվիզիայում մնալ վորոնումների շրջանում։ Այդ աշխատանքը մեզ մինչև այժմ չի հաջողվել դնել այն բարձրության վրա, ինչ բարձրության վրա վոր գտնվում են մեր քաղ-լուս. մյուս աշխատանքները։ Ճիշտ է, մենք վորոշ զորամասերում ունենք բավական հաջող կազմակերպված լենինյան անկյուններ, սակայն այդ անկյուններում տարվող աշխատանքների բովանդակությունը չի կարելի բավարար համարել։ Դեռ գոյություն ունեն վարչական ձևերով աշխատանք տանելու յեղանակներ, դեռ չի հաջողվել մեզ արտադպրոցական աշխատանքի միջոցով այնպես նպատակահարմար կազմակերպել կարմիր բանակայինի հանգիստը, վոր նա մեծ բավականությամբ հաճախի լենինյան անկյունը և մասնակցի աշխատանքին։ Լինում են դեպքեր, յերբ արտադպրոցական աշխատանքները վոչ միայն չեն կազմակերպում կարմիր բանակայինի հանգիստը, այլ նրան հոգնեցնում են։

«Արտադպրոցական աշխատանքը կուսակցական աշխատանք է անկուսակցականների մեջ» լոզունգը մեր կուս. կազմակերպությունների կողմից լիովին չի գիտակցված։ Ապագայում անհրաժեշտ է կռվել նման թերությունների դեմ։

Արտադպրոցական աշխատանքը պետք է կենդանացնել—սա հիմնական խնդիր է մեր Դիվիզիայի համար։ Անհրաժեշտ է, վորպեսզի պահպանվի արտադպրոցական աշխատանքների լիակատար կամավորականու-



թյունը։ Անհրաժեշտ է նպատակահարմար խաղերի և զանազան զվարճալիքների միջոցով հետաքրքրություն առաջացնել դեպի լենինյան անկյունն և ակումբը՝ դարձնելով նրանց կոմունիստական դաստիարակության վայրեր։ Արտադպրոցական աշխատանքներին պետք է քաշել հրամկազմին, ոգտագործել կանանց ուժերը, վերապատրաստել ակումբային աշխատակիցներին։

10. Հակակրոնական պրոպագանդայի ասպարեզում շատ քիչ բան է արված։ Այդ աշխատանքը պետք է տանել հատուկ պատրաստություն ունեցող ընկերների միջոցով և ծրագրված կերպով։ Անհրաժեշտ է քաղբաժնի ղեկավարությամբ կազմակերպել հակակրոնական սեմինարիաներ այդ ասպարեզում աշխատողներ պատրաստելու համար։ Հակակրոնական պրոպագանդայի աշխատանքները պետք է համաձայնեցնել ՀԿԿ կենտրոնական Կոմիտեյի հետ։

11. Հրատարակչական աշխատանքների ասպարեզում 1925 թ. ընթացքում մենք մի շարք հաջողություններ ենք ունեցել։ Քաղ-բաժնի որգան՝ «Կարմիր Զինվորը» սկսել է հրատարակվել շաբաթական յերկու անգամ։ Քաղբաժինը հրատարակել է «Հեղափոխական Գահակ» ամսագիրը, վորը սակայն տարվա կեսին դադարել է միջոցների սղության պատճառով։ Հրատարակվել են նույնպես մի շարք գրքույկներ կարմիր բանակայինների ընթերցանության համար։ «Կարմիր Զինվորի» շուրջը համախմբված զինթղթակիցների թիվը գնալով աճում է և տիրաժը բարձրանում։

Զորամասերում գրեթե բոլոր վաշտերն ունեն իրենց պատի լրագրերը, վորոնք իրենց շուրջն են համախմբել հսկայական թվով զինթղթակիցներ։ Բացի այդ

զինթղթակիցների աշխատանքները դեռ ամբողջապես չեն կազմակերպվել, պատի լրագրերն ունեն մեծ թերություններ, թե՛ տեխնիկայի և թե՛ բովանդակության տեսակետից: Անհրաժեշտ է կազմակերպված հունի մեջ դնել զինթղթակիցների աշխատանքները, բարձրացնել պատի լրագրերի տեխնիկան, նրանց բովանդակությունը հարմարեցնել զորամասի պահանջներին:

12. Անցած տարվա վերջերից Դիվիզիայում առանձին կենդանություն է ցույց տվել Ռազմա-գիտական ընկերությունը (ВНО): Այդ ասպարեզում անհրաժեշտ է, վոր այդ կազմակերպությունների ցանցը տարածվի նաև քաղաքացիական կազմակերպությունների շրջանում և առանձնապես Կոմյերիտմիության մեջ:

Ազգաբնակչության մեջ ռազմական պրոպագանդայի ուժեղացման գործին, մեծ չափով պետք է օժանդակեն յերկրային զորամասերն ու նախակոչիկները: Անհրաժեշտ է այդ ասպարեզում կուս. կոմիտեների և Գլխքաղլուսվարի հետ համագործակցություն սահմանել: Պետք է աշխատել խրճիթ-ընթերցարաններին կից բանալ ռազմական անկյուններ, վորոնք պետք է դառնան ազգաբնակչության մեջ մղվելիք ռազմական պրոպագանդայի օջախներ: Անհրաժեշտ է Քաղլուսվարի միջոցներով այդ անկյուններին հայթհայթել ռազմական գրականություն, զինվորական թերթեր, պլակատներ և այլն:

13. Մեր Դիվիզիայի համար, աշխատանքի համեմատաբար նոր ձև է նախազորակոչյան պատրաստությունը: Այդ ասպարեզում չպետք է կրկնել անցյալի սխալները: Ամեն անգամ, նախազորակոչյան պատրաստությունը սկսելուց առաջ պետք է տարվի բացատրական ագիտ-կամպանիա ազգաբնակչության մեջ:



Պարապմունքների ընթացքում Գլխքաղլուսվարի միջոցներով պետք է աշխատել լիկվիդացիայի յենթարկել նախակոչիկների տեխնիկական անգրագիտությունը քաղ-ապարատի անմիջական հսկողության տակ:

Բոլոր վարժակայանները պետք է ապահովել պատրաստված քաղղեկներով: Զորամասի հսկողությունը չպետք է թուլացնել:

# ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ԼԿՅԵՄ նախընթաց տարվա աշխատանքներում հարկավոր է արձանագրել մի շարք նվաճումներ. այն է՝ վերջնականապես աշխատանքի կազմակերպչական ձեվեր սահմանելը կարմիր բանակային անկուսակցական մասսայի ամենաակտիվ մասի ընդգրկելը, ԼԿՅԵՄ Միության ստորին կազմակերպությունների համար պրոպագանդիստական ուժերի դաստիարակումն ու առաջքաշումը, քաղուսուցման վերջին ժամանակների ծավալումը, նոր ակտիվիստներ առաջ քաշելը միության ղեկավարող աշխատանքի համար, կուսկորիզի ավելացումը, ծրագրային աշխատանք մտցնելը, քաղաքացիական կազմակերպությունների հետ կապի կանոնավորումը և այլն:

Այդ հաջողությունների հետ միասին հարկավոր է նշել նաև հետևյալ թերությունները.

ա) Բավական զգալի չափով խախտվել է միութենական և զինվորական կարգապահությունը:

բ) Միության աշխատանքներում չի յեղել բավարար կենդանություն:

գ) Թույլ է ուսումնասիրվել ԼԿՅԵՄ կազմակերպության վորակական կազմը:



դ) Թույլ են լուսաբանվել ԼԿՅԵՄ կազմակերպության ընդհանուր հարցերը՝ Միության մեջ:

ե) Բավարար չափով կոմյերիտականները ակտիվ մասնակից չեն դարձվել զորամասերի մասսայական կուսքաղլուսաշխատանքներին:

զ) Տեղ-տեղ բավականաչափ ճիշտ ղեկավարություն չի յեղել կուսկազմակերպության կողմից:

Հետագայում, յելնելով այս դրություններից, անհրաժեշտ է.—

## 1. ԿՈՄՍՈՄՈԼՆ ՈՒ ԲԱՆԱԿԸ

1. Ուժեղ պայքար մղել՝ կոմյերիտականների կողմից թե՛ միութենական և թե՛ զինվորական կարգապահության խախտման դեմ:

Այս հարցը պետք է Կոմյերիտմիության աշխատանքում կենտրոնական տեղերից մեկը բռնի: Կոմյերիտմիությունն անկուսակցական կարմիր բանակայինների մեջ առաջավոր և ամենաակտիվ մասն է կազմում. ԼԿՅԵՄ անդամը պետք է որինակելի լինի իր կարգապահությամբ, ծառայության բոլոր պահանջների կատարումով:

ԼԿՅԵՄ խմբակը չպետք է անուշադիր թողնի Կոմյերիտմիության անդամի կողմից կարգապահության խախտման և վոչ մի դեպք: Անհրաժեշտ է նպատակ դնել, վոր ԼԿՅԵՄ խմբակներն իրոք կուսակցության աջակցողները լինեն բանակում և ամուր դիսցիպլինայի ամրապնդման գործում:

2. Դիվիզիան, վերջին համալրման ժամանակ քաղաքականապես կիսագրագետ բավական մեծ մասսա է ստացել, որի մեջ ակտիվը չնչին տոկոս է կազմում:

Դիվկուսկոնֆերանսը շեշտում է, որ շարքից դուրս անհրաժեշտ է ուժեղացնել նրանց մեջ քաղաքական դաստիարակությունը:

Բանակի նկատմամբ, այդ կոմյերիտականների դաստիարակությունն անհրաժեշտ է տանել այն տեսակետից, որ նրանք ըմբռնեն բանակի ռազմունակության ամրացման անհրաժեշտությունը, զգան, որ անհրաժեշտ է կռվել այն տրամադրությունների դեմ, ինչպիսին են՝ արձակուրդ գնալու ձգտումը, սիմուլյացիան, թափթփվածությունը և այլն:

## 2. ՆԵՐԽՄԲԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Միության մեջ յուրաքանչյուր աշխատանքի անհրաժեշտ նախադրյալը կազմակերպության և մանավորապես նրա ակտիվի թե՛ քանակական և թե՛ որակական կազմի լուրջ ուսումնասիրությունն է: Ուսումնասիրության անհրաժեշտությունը թելադրվում է մանավորապես կազմակերպության աճումը կանոնավորելու նպատակով:

2. Աջակցության խմբակների հետագա ամրացումը պետք է ընթանա խմբակների աշխատանքների կենդանացման, կոմյերիտականների ինքնագործունեության և ակտիվության աճման ուղիով: Իսկ այդ կարելի յե ձեռք բերել միայն այն ժամանակ, յերբ կը պահպանվեն հետևյալ պայմանները.



ա) Խմբակների ժողովներում քննության առնվող հարցերը պետք է համապատասխանեն միության անդամների իրական պահանջներին: Այդ պատճառով թե՛ ղեկավարող մարմինները և թե՛ առանձին աշխատողները պետք է ուսումնասիրեն այդ պահանջներն և ըստ հնարավորության բավարարեն.

բ) Պետք է հրաժարվել այնպիսի ժողովներից, որոնք հրավիրվում են «միայն ժողով գումարելու համար»: Օրակարգը պետք է բարեխղճորեն մշակվի: Այս հարցում անհրաժեշտ է կատարելապես հրաժարվել կազյոնշչինայից.

գ) Անհրաժեշտ է կատարյալ ծրագրայնություն պահպանել Միության աշխատանքում: Մեր Դիվիզիայի կազմակերպությունն այնքան է աճել, որ հարկավոր է դեն գցել աշխատանքի անայնագործ ամեն մի մեթոդ: Միության ամբողջ աշխատանքը պետք է վաղօրոք նախատեսված լինի: Անհրաժեշտ է լրիվ չափով օգտագործել միության ուժը:

դ) Միության խմբակների ամբողջ կազմակերպչական-դաստիարակչական աշխատանքը պետք է սերտորեն կապված լինի զորամասի շարային կյանքի և կենցաղի հետ:

ե) Պետք է ուժեղացնել կոմյերիտական մասսային՝ ընդհանուր-քաղաքական և ընդհանուր-կոմյերիտական հարցերին ծանոթացնելու աշխատանքը:

3. Միության աճման նկատմամբ, յելնելով միության ընդհանուր գծից, կոնֆերանսը անհրաժեշտ է համարում շարունակել հետագայում միության շարքերը գրավել ամբողջ բանվոր յերիտասարդությանը, բատրակային և չքավոր յերիտասարդության մեծ մա—

ռին և միջակ գյուղացի յերիտասարդության լավագույն մասին։ Ընդունելության ժամանակ պետք է առաջնորդվել դաստիարակչական ընդգրկման հնարավորությունից։

Յուրաքանչյուր զորակոչի ճիշտ վորոշված ժամկետները հնարավորություն են տալիս նշելու միության ավելի ուժեղ ընդունելության շրջանները, վոր պիտի տեղի ունենան ձմրան շրջանի յերկրորդ կեսին և ճամբարակում (լագերում) յեղած միջոցին։

Միության մեջ ընդունելության համար ուսումնասիրության աշխատանքը պետք է կատարվի ամբողջ ժամանակ և պետք է ուժեղացվի զորակոչին անմիջապես հաջորդող շրջանում։

## 3. ԱԿՏԻՎԻ ԱՌԱՋ ՔԱՇԵԼՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼԸ

Բանակի և մանավորապես մեր Դիվիզիայի կոմյերիտական աշխատանքի պայմաններում,—յերբ կոմյերիտմիության վրա խնդիր է դրվում կուսակցության ազդեցության հաղորդիչը լինել անկուսակցական կարմիր բանակային մասսայի մեջ և այդ պրոցեսում դաստիարակել միության սովորական մասսային,—մեծ կարևորություն է ստանում կոմյերիտական ակտիվ առաջ քաշելու և դաստիարակելու խնդիրը։

1. Այդ խնդիրը մասամբ կարելի յե լուծել կոմյերիտական ամբողջ մասսային մասնակից դարձնելով կուսակցության աջակցության խմբակների գործնական աշխատանքներին։ Դրա համար անհրաժեշտ է.

ա) Այնպես անել, վոր յուրաքանչյուր կոմյերիտական իր ընդունակությունների համեմատ իրապես



և համապատասխան ծանրաբեռնված լինի գործնական աշխատանքով։

բ) Հատուկ ուշադրություն դարձնել հանձնարարված աշխատանքի կատարման համար մշտական վերահսկողության և ղեկավարության վրա։

2. Պրոպկոլլեկտիվներում ըստ հնարավորության մեծ թվով կոմյերիտականներ ընդգրկելու նպատակով, պետք է ձգտել, վոր ավելացվի պրոպկոլլեկտիվների թիվը (մոտավորապես յուրաքանչյուր խոշոր մասում յերկու պրոպկոլլեկտիվ)։ Անհրաժեշտ է նշել, վոր այս ընագավառում ևս ժամանակն է հրաժարվել տնայնագործ ձևերից. ավելի սիստեմատիկ և ծրագրային աշխատանք է պետք, վորը կենդանացում կը մտցնի միության աշխատանքի մեջ և աջակցության խմբակներին կապահովի պրոպագանդիստական ուժերով։

3. Պետք է ակտիվ կոմյերիտականների ավելի լայն շրջանին մասնակից դարձնել գնդի, ԼԿՑԵՄ հրահանգչական խորհրդակցություններին։

4. Արձանագրելով ԼԿՑԵՄ ակտիվի ցածր քաղաքական մակարդակը, կոնֆերենցիան շեշտում է, վոր անհրաժեշտ է ուժեղացնել աշխատանքն այդ ասպարեզում, ակտիվի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել և մանավորապես՝ նրանց ծանրաբեռնվածությունը կարգավորել։

Անհրաժեշտ է նույնպես հատուկ ուշադրություն դարձնել ԼԿՑԵՄ թուրքական խմբակին առաջ քաշելու և դաստիարակելու վրա։

5. Քաղաքացիական կազմակերպությունների հետ ունեցած կապի ընագավառում կոնֆերանսը նշում է վորոշ հաջողություններ։

Հետագայում այդ աշխատանքը պետք է խորացնել քաղաքացիական կազմակերպությունների ավելի ուժեղ թափով ռազմականացնելու և բանակի միության անդամներին շարունակ բանակից դուրս տեղի ունեցող կյանքին իրազեկ անելու միջոցով:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԵՋ

Նշելով վորոշ նվաճումներ արտադպրոցական աշխատանքում ԼԿՅԵՄ պրակտիկ մասնակցության գործում, կոնֆերանսը անհրաժեշտ է համարում այդ աշխատանքի հետագա ուժեղացումը:

Կուսակցության այն լոզունգը, թե՝ «կուսակցության աշխատանքն անկուսակցականների մեջ արտադպրոցական աշխատանքն է», միևնույն ժամանակ և կոմյերիտմիության լոզունգն է:

Կոմյերիտմիությունը պետք է կուսակցության ակտիվ ոգնականը լինի և այդ հարցում:

## 5. ԿՈՒՍՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1. 1902 թվի ծնված կարմիր բանակայինների զորացրման և 1903 թվի զորակոչի հետևանքով կուսկորիզի տոկոսն ընկել է միության մեջ. (յեղել է 27, դարձել է 18.9 տոկոս, առանց դպրոցների): Դրա համար էլ կուսկորիզի մեծացման հոգատարությունը կուսակցության և միության հերթական խնդիրը պետք է դառնա: Անհրաժեշտ է թե՛ վորակով և թե՛ քանակով բարելավել կուսկորիզը: Դրա



համար պետք է սիստեմատիկ կերպով կուսակցությանը հանձնել ամենից առկուն և պատրաստված կոմյերիտականներին:

2. Մեր յերկրի հետագա՝ մշտապես բարդացող աճման հետևանքով ԼԿՅԵՄ նկատմամբ յեղած կուսակցության ճիշտ ղեկավարության հարցը կրկնակի կարևոր նշանակություն է ստանում: Մինչդեռ այդ ասպարեզում մենք ունենք վորոշ բացեր: Անհրաժեշտ է ճիշտ ըմբռնել Կոմյերիտմիության դերը բանակում, վորպես կուսակցության ոգնականի և նրա ազդեցության անկուսակցական յերիտասարդության վրա տարածողի:

Կուսղեկավարությունը պետք է այնպիսի բնույթ կրի, վոր վոչ թե մանր խնամակալությամբ զբաղվի, այլ ապահովի թե՛ առանձին կոմյերիտականների և թե՛ ամբողջ խմբակի ինքնագործունեությունը, ակտիվությունն ու նախաձեռնությունը:

Այդ ասպարեզում անհրաժեշտ է.—

ա) Լայն չափով ոգտագործել կուսակցական-կոմյերիտականներին միության ղեկավարող աշխատանքներում, վճռական կռիվ մղել միութենական կյանքից կտրվածության դեմ և պարբերաբար լսել նրանց զեկուցումները իրենց կատարած աշխատանքի մասին:

բ) Մշտապես նկատի ունենալ, վոր անհրաժեշտ է իրազեկ անել կոմյերիտականներին քաղաքականության և կուսակցության խնդիրների վերաբերյալ, այնպես, վոր նրանք «չշփոթեն», չաղավաղեն կուսակցության վարքագիծը:

գ) Ուժեղացնել կուսակցության մարմինների և մասնավորապես Դիվիզիայի կուսակցական հանձնաժո–

ղովի ուշադրությունը միության հիվանդագին յերեվույթների վրա և կանխելու համար համապատասխան միջոցներ ձեռք առնել։

3. Յելնելով այն հանգամանքից, վոր գործարաններում հսկայական թվով կոմյերիտականներ կան, կոնֆերանսը անհրաժեշտ է համարում հարց բարձրացնել խոշոր գործարաններում ունենալ հաստիքային (շտատային) կոմյերիտական աշխատող, վորով զգալի չափով լուծված կը լինի կոմյերիտմիության ճիշտ ղեկավարության հարցը։

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | | էջ |
|---|---|---|
| 1. | Բանաձև ընկ. Աշոտ Հովհաննիսյանի՝ «Լենինիզմը և մեր քաղաքականության հերթական խնդիրները» զեկուցման առթիվ . . . . . . . . . | 5 |
| 2. | Բանաձև Կովկասյան կարմրադրոշ Բանակի Քաղաքական Վարչության զեկուցման առթիվ . . . | 6 |
| 3. | Բանաձև Հայկական Հրաձիգ Դիվիզիայի Քաղբաժնի զեկուցման առթիվ . . . . . . . . . . | 9 |
| 4. | Բանաձև Դիվիզիայի կուսհանձնաժողովի զեկուցման առթիվ . . . . . . . . . . . . . . . | 19 |
| 5. | Կուսակցական շինարարության հերթական անելիքները . . . . . . . . . . . . . . . | 23 |
| 6. | Ագիտ-պրոպ խնդիրներ . . . . . . . . . . . | 34 |
| 7. | Կոմյերիտական աշխատանքի մասին . . . . . . | 44 |

ՀՀ Ազգային գրադարան
NL0218670

41.278

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

«ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐԻ» ԳՐԱԴԱՐԱՆ № 1

*Հ. Հ. Դիվիզիայի Քաղբաժնի Հրատարակութիւն*